Արձանագրություն N 3
Գրենական ապրանքների ձեռքբերման «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-18/138» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի բացման նիստի շարունակության

ք. Երևան

07.04.2018թ.
Ժամը՝ 15:00

Մասնակցում էին
Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Ալավերդյան /ԳԱՊ/
Հանձնաժողովի անդամներ՝ Վ. Դեմիրչյան /գնահատող/, Ա. Գասպարյան /գնահատող/
Ա. Բաբայան /բացող/, Ս. Շահբազյան /բացող/
Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Համբարձումյան

1. Գների նվազեցման բանակցություններին անցակացման մասին

(Ա. Ալավերդյան)

1.1 Ընդունել ի գիտություն, որ համաձայն «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի՝ «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-18/138» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում անցկացվող գնային առաջարկների նվազեցման բանակցություններին «Սմարթլայն» ՍՊԸ-ն չի ներկայացել:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ - 0:

2. «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-18/138» ծածկագրով ընթացակարգը որոշ չափաբաժինների մասով չկայացած հայտարարելու մասին

(Ա. Ալավերդյան)

2.1 Հաշվի առնելով, որ ընթացակարգի 11-ից-14-րդ, 18-րդ և 20-րդ չափաբաժինների մասով հայտ ներկայացրած մասնակիցը չէ ներկայացել բանակցություններին, իսկ ընթացակարգի 15-րդ և 17-րդ չափաբաժինների մասով հայտի չի ներկայացվել՝ հանձնաժողովը որոշեց նշված չափաբաժինները հայտարարել չկայացած:

2.2 Հաստատել չկայացած հայտարարելու մասին հայտարարության տեքստը:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

3. Ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների մասին

(Ա. Ալավերդյան)

Գնահատող հանձնաժողովի որոշմամբ «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-18/138» ծածկագրով գնման ընթացակարգի.

-1-6-րդ, 8-10-րդ չափաբաժինների մասով առաջին տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչվել «ԱՐՄՔՈՄՓՎԻՆՆԵՐ» ՍՊԸ-ն, որպես բավարար գնահատված նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից,

- 7-րդ, 16-րդ, 19-րդ չափաբաժինների մասով առաջին տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչվել «Սմարթլայն» ՍՊԸ-ն, որպես բավարար գնահատված նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

4. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնելու և 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցներին ծանուցելու մասին

(Ա. Ալավերդյան)

4.1 Հիմք ընդունելով «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետը՝ գնման ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ 07.04.2018թ. հարցում ներկայացնել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

4.2 07.04.2018թ. ծանուցել 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցներին հրավերով սահմանված ժամկետում (երեք աշխատանքային օր) ներկայացնել իրենց կողմից առաջարկվող ապրանքների՝ անվանումը, ապրանքային նշանը, արտադրողի անվանումը, ծագման երկիրը և տեխնիկական բնութագրերը՝ համաձայն հրավերի 6.1 հավելվածի:

Հրավերով սահմանված ժամկետում փաստաթղթերը չներկայացվելու դեպքում հանձնաժողովի կողմից կմերժվի առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների հայտերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ - 0:

5. Ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(Ա. Ալավերդյան)

Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել սույն արձանագրության 3-րդ կետում նշված փաստաթղթերի ստացման հաջորդ աշխատանքային օրը, ժամը 11:30-ին, Երևանի քաղաքապետարան, Արգիշտիի 1, 3-րդ հարկ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ..... Ա. Ալավերդյան

Անդամներ՝ ..... Ա. Բաբայան

..... Վ. Դեմիրչյան

..... Ս. Շահբազյան

..... Ա. Գասպարյան

Քարտուղար՝ ..... Ա. Համբարձումյան